ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2023 թվականի N 2021 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 730-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերը հաստատելու մասին» N 730-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) N 26 հավելվածում ստուգաթերթի և հարցաշարի վերնագրերում «Ցեմենտների ստուգման վերաբերյալ» բառերը փոխարինել «Ցեմենտների, ցեմենտային կլինկերի ստուգման վերաբերյալ» բառերով.

2) N 26 հավելվածում «(ԱՏԳ ԱԱ 2523 ծածկագրին կամ G46, G47 ՏԳՏ դասակարգչին համապատասխան)» բառերը փոխարինել «(ԱՏԳ ԱԱ 2523 10 000 0, 2523 21 000 0, 2523 29 000 0, 2523 30 000 0, 2523 90 000 0 կամ G46, G47 ՏԳՏ դասակարգչին համապատասխան)» բառերով.

3) N 26 հավելվածում հարցաշարի 1-ին կետը «ցեմենտներն» բառից հետո լրացնել «, ցեմենտային կլինկերը» բառերով.

4) N 26 հավելվածում հարցաշարի 2-րդ, 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ, 2.4-րդ, 2.5-րդ, 2.6-րդ, 2.7-րդ, 2.8-րդ, 2.9-րդ, 2.10-րդ և 2.11-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

2.	Արդյո՞ք ցեմենտների և ցեմենտային կլինկերի յուրաքանչյուր խմբաքանակն ուղեկցվում է ապրանքաուղեկից փաստաթղթով, որում նշված են հետևյալ տվյալները՝	Կանոնակարգի 21-րդ կետ			Պահանջը վերաբերում է միայն ապրանք արտադրողին, մատակարա-րին			
2.1	արտադրող կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը և հասցեն.	1) ենթակետ	տեսազննում	1.0				
2.2	արտադրանքի պայմանական նշագիրը կամ լրիվ անվանումը.	2) ենթակետ	տեսազննում	1.0				
2.3	խմբաքանակի համարը և բեռնառաքման ամսաթիվը.	3) ենթակետ	տեսազննում	1.0				
2.4	արտադրանքում հանքային հավելույթների տեսակը և քանակը.	4) ենթակետ	տեսազննում	1.0				
2.5	արտադրանքի ամրության դասը.	5) ենթակետ	տեսազննում	1,0				
2.6	արտադրանքի երաշխիքային ժամկետը.	6) ենթակետ	տեսազննում	1.0				
2.7	փաթեթվածքում արտադրանքի զտաքաշը.	7) ենթակետ	տեսազննում	1.0				
2.8	բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ Aէֆ ակտիվությունը.	8) ենթակետ	տեսազննում	1.0				
2.9	փոխադրամիջոցի համարանիշը.	9) ենթակետ	տեսազննում	0.5				
2.10	համապատասխանության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը	10) ենթակետ	տեսազննում	0.5				
2.11	համապատասխանության ազգային նշանը և նորմատիվ փաստաթղթի նշագիրը, որի համաձայն արտադրվել է արտադրանքը	11) ենթակետ	տեսազննում	0.5				

».

5) N 26 հավելվածում հարցաշարի 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ, 3.4-րդ կետերում «ցեմենտը» բառը փոխարինել «Ցեմենտները, ցեմենտային կլինկերը» բառերով,

իսկ 3.3-րդ կետը «ցեմենտների» բառից հետո լրացնել «, ցեմենտային կլինկերի» բառերով.

6) N 26 հավելվածում հարցաշարի 9-րդ և 10-րդ կետերի 5-րդ սյունակներում «3.0» թիվ համապատասխանաբար փոխարինել «2.0» թվով.

7) N 26 հավելվածը հարցաշարի 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով՝

«

11.	Արդյո՞ք ցեմենտային կլինկերի քիմիական ցուցանիշները համապատասխանում են N 4 աղյուսակով սահմանված նորմերին:	Կանոնակարգի 13-րդ կետ	փորձաքննություն	2.0			

»:

2. N 17 հավելվածի N 3 աղյուսակում հարցաշարի 5-րդ և 9.6-րդ կետերում «մգ/գ» բառը փոխարինել «մգ/սմ^3» բառով:

3. N 11 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ 3-րդ կետը՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ